

**ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԶՈՒԳԱՇԵՌՆԵՐԸ ՄԻԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ԵՎ ԵՂԻՇԵ
ՉԱՐԵՆՑԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ**

**LINGUISTIC AND STYLISTIC PARALLELS IN MISSAK METSARENTS AND
YEGHISHE CHARENTS COLLECTIONS OF THE SAME NAME**

**ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ ПАРАЛЛЕЛИ В ОДНОИМЕННЫХ СБОРНИКАХ
МИСАКА МЕЦАРЕНЦА И ЕГИШЕ ЧАРЕНЦА**

Շարինե Առաքելյան
Karine Arakelyan
Карине Аракелян

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Linguistics after H. Acharian, National Academy of Sciences, Armenia
Институт языка им. Р. Ачаряна, Национальная академия наук, Армения

karine.arakelyan@lang.sci.am

Ներկայացվել է՝ 07.04.2025; գրախոսվել է՝ 28.04.2025; ընդունվել է՝ 14.04.2026

Received: 07.04.2025; Revised: 28.04.2025; Accepted: 14.04.2026

Представлено: 07.04.2025; рецензировано: 28.04.2025; принято: 14.04.2026

- © Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
- © The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
- © Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-126

Ամփոփում – Հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի բանաստեղծական աշխարհի ձևավորման գործում մեծ ազդեցություն են ունեցել հայ գրականության՝ հատկապես քնարերգության ակնառու ներկայացուցիչները, որոնց թվում և քսաներորդ դարասկզբի արևմտահայ ականավոր քնարերգու Միսաք Մեծարենցը: Ազդեցությունները, որոնք Չարենցը կրել է Միսաք Մեծարենցից, անշուշտ, միայն գաղափարական կամ գեղագիտական չէին, այլև լեզվաոճական: «Ծիածանը» Մեծարենցի անդրանիկ ժողովածուն է. այդպես է կոչվում նաև Չարենցի առաջին ժողովածուներից մեկը: Թե՛ Մեծարենցի, թե՛ Չարենցի չափածոյում, մասնավորապես «Ծիածան» ժողովածուներում, գունանիշ բառերն ունեն մեծ դեր ու կշիռ: Չարենցը ծիածանի բոլոր գույներից ընտրում է երեքը՝ կապույտը, ոսկին, մանուշակագույնը՝ որպես տարիքի և տրամադրությունների խորհրդանիշ, և սրանց հիման վրա կառուցում իր բանաստեղծական շարքերը: Մեծարենցի ժողովածուում գույների նման խիստ շեշտադրում չկա, բայց դրանք չափազանց խոսուն են: Թեև գույն արտահայտող բառերը զգացումների անվանումներ չեն, սակայն հաճախ զգացմունքների կամ տրամադրության արտահայտիչ են: Շատ դեպքերում այս միավորները ոչ միայն «գունավորում» ու «երանգավորում» են խոսքը, այլև մեծ չափով բանաստեղծականացնում, իսկ գունային հոմանիշները զարդարում ու հարստացնում են լեզուն: Գույները նաև խորհրդանիշ են, որոնց միջոցով հեղինակները հաճախ հասնում են փիլիսոփայական խոր ընդհանրացումների, ամբողջացնում գեղագիտական ընկալումները՝

խոսքին հաղորդելով նոր որակներ: Երկու ժողովածուներում հավասարապես մեծ է գունանուն արմատներով կազմված բառերի, նորակազմությունների դերը, որոնց ճաբանական դիտարկումը թույլ է տալիս ավելի խոր ներթափանցելու մեծ բանաստեղծների կերտած պատկերների թաքուն ծալքերն ու ենթաշերտերը, պեղել քնարական ինքնատիպ աշխարհների կապն ու հարազատությունը:

Abstract – Outstanding representatives of Armenian literature, especially lyric poetry, including the well-known Western Armenian poet of the beginning of the 20th century Missak Metsarents, had a great influence in the formation of the poetic world of great Armenian poet Yeghishe Charents. The influences that Charents felt from Metsarents were not only ideological or aesthetic, but also linguistic and stylistic. The first collection of Metsarents is called "Rainbow", like one of the first collections of Charents. The range of colors play enormous role either in the poetry of Metsarents, or in the poetry of Charents, especially in the collections "Rainbow". Charents chooses three of the all colors of the rainbow: blue, gold, and purple, as symbols of age and moods, and builds his poetic lines based on these. There is no such strong emphasis on colors in Metsarents' collection, but they are extremely expressive. Although color words are not names of feelings, they are often expressive for emotions or moods. In many cases, these units not only "color" and "shade" the speech, but also poeticize it to a great extent. The authors also used many synonyms of color names, which decorate and enrich the language. Colors are also symbols, through which authors often reach deep philosophical generalizations, complete aesthetic perceptions, give speech new qualities. In both collections, the role of words and new formations formed from color-name roots is equally great, the stylistic observation of which allows us to penetrate more deeply into the hidden stratum and sublayers of the images created by the great poets, to excavate the connection and affinity of unique lyrical worlds.

Аннотация – Выдающиеся представители армянской литературы, особенно лирической поэзии, в том числе известный западноармянский поэт начала XX века Мисак Мецаренц, оказали заметное влияние на формирование поэтического мира великого армянского поэта Егише Чаренца. Влияние, оказанное Мецаренцем, носило не только идеологический или эстетический характер, но и лингвостилистический. Первый сборник Мецаренца был издан под названием «Радуга», как и один из первых сборников Чаренца. В своих сборниках оба автора использовали лексику, имеющую отношение к обозначению цвета, что в значительной степени способствовало поэтизации, стилизации поэтического текста. Из всех цветов спектра Чаренц выбрал три: синий, золотой и фиолетовый как символы возраста и настроения. В поэзии Мецаренца символика цвета не имеет столь выраженного характера, хотя и цвет отражает те или иные эмоции и настроения. Цвета являются также символами, усугубляющими эстетическое восприятие поэзии, придающими речи новую окраску. Оба поэта используют лексику, образованную от цветообозначающих корней, что позволяет им придать особую образность стихам и тем самым создать неповторимые лирические миры.

Հիմնարարներ – Մեծարենց, Չարենց, ծիածան, լեզու, ոճ:

Key words – Metsarents, Charents, rainbow, language, style.

Ключевые слова – Мецаренц, Чаренц, радуга, язык, стиль.

Ներածություն

Հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի բանաստեղծական աշխարհի ձևավորման գործում մեծ ազդեցություն են ունեցել հայ գրականության՝ հատկապես քնարերգության ակնառու ներկայացուցիչները: Ինչպես նշվել է գրականագիտության մեջ, «XX դարի բազմազան ուղիների բարդ հարաբերության մեջ երիտասարդ Չարենցի համար հափշտակության առարկա եղան հայրենական պոեզիայի ավանդները, մասնավորապես Վահան Տերյանի և Միսաք Մեծարենցի բանաստեղծական աշխարհը: Վաղ Չարենցի բանաստեղծական աշխարհի ձևավորմանը ազդակներ են տվել հայրենի գրականության ուրիշ նշանավոր դեմքեր ևս, Գրիգոր Նարեկացուց մինչև Սիամանթո նրան պարզել են մարդկային ապրումներն արտահայտելու բանալիներ ու սկզբունքներ: Բայց ամենից ավելի Մ. Մեծարենցը և, հատկապես, Վահան Տերյանն է Չարենցի քնարերգության վրա թողել ամուր և անջնջելի կնիք» (Աղաբաբյան 1986, 235):

Ազդեցությունները, որոնք Չարենցը կրել է այս երկու բանաստեղծներից, անշուշտ, միայն գաղափարական կամ գեղագիտական չէին, այլև լեզվաոճական էին: Չարենցի՝ Տերյանից կրած ազդեցությունների մասին շատ է խոսվել ու գրվել: Ռաֆայել Իշխանյանը գտնում էր, որ 1920-ական թվականներից է սկսվում Չարենցի լեզվի զարգացման երկրորդ շրջանը: «Եթե 10-ական թթ. ընդգրկող առաջին շրջանը, լեզվաոճի ինքնուրույնության հատկանիշներով հանդերձ, հիմնականում տերյանական էր, ապա երկրորդն արդեն գերազանցապես զուտ չարենցյան է» (Իշխանյան 1972, 59):

Իր երկերի 1932 թ. հրատարակության «Երկու խոսք» մասում Չարենցը գրում է, որ առաջին շրջանի գրած երկերի մեծ մասը թե՛ ձևի և թե՛ բովանդակության առումով ինքնուրույն ու բնորոշ չեն իր ստեղծագործական տարերքի համար» (Չարենց 1932, Երկու խոսք): Ասվածից Իշխանյանը եզրակացնում է, որ «բանաստեղծն ինքն էլ իր այդ շրջանի երկերի մեծ մասը տերյանական է համարել, անշուշտ, նաև լեզվաոճով» (Իշխանյան 1972, 59):

Չարենցի՝ Մեծարենցից ստացած ազդակների մասին շատ քիչ է խոսվել, և այստեղ ուզում ենք անդրադառնալ Մեծարենցի և Չարենցի ստեղծագործությունների լեզվական առնչություններին, հատկապես համանուն ժողովածուների առնչություններին:

«Ծիածան»ների լեզվաոճական առնչությունները

«Ծիածանը» Մեծարենցի անդրանիկ ժողովածուն է՝ տպագրված 1907-ին: Դրանից առաջ եղել է «Բաբախումներ» շարքը, սակայն ինչպես նշվել է. ««Բաբախումները» ժողովածու – շարք չէ, ինչպես, ասենք, Սիամանթոյի «Դյուցազնորենը», Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջները» կամ Դանիել Վարուժանի «Հացին երգը», որոնցում ընդգրկված բանաստեղծությունները գաղափարական թեմատիկ ամբողջություն են ներկայացնում՝ պահպանելով նաև կոմպոզիցիոն յուրահատկությունը: «Բաբախումները» պարզապես ժողովածու-հավաքածու է,

որի քերթվածները, կարելի է ասել, դասավորված են պատահական հերթակա- նությամբ» (Շարություն 1983, 66):

Չարենցի անդրանիկ ժողովածուներից մեկը նույնպես կոչվում է «Ծիածան»՝ տպագրված 1917-ին: Գրականագիտության մեջ կարծիք է արտահայտվել, որ Չարենցն իր ժողովածուն (որոշ գիտնականների կարծիքով՝ քնարական պոեմը) անվանել է «Ծիածան»՝ կրելով հենց Մեծարենցի ազդեցությունը (տե՛ս Աղաբաբ- յան 1973, 55, 68):

Որ երկու դեպքում էլ ժողովածուի անվանումն ընթերցողի մոտ գունային զգացողություն է արթնացնում, կասկածից վեր է: Երկու ժողովածուներում էլ հեղինակները կիրառել են բազմաթիվ գունանիշ բառեր՝ գունանուններ, գույն նշանակող արմատներով կազմություններ, նորակազմություններ և այլն, որոնք անչափ նպաստել են խոսքի բանաստեղծականացմանը: Չարենցը ծիածանի բոլոր գույներից ընտրում է երեքը՝ կապույտը, ոսկին, մանուշակագույնը՝ որպես տարիքի և տրամադրությունների խորհրդանիշ, և սրանց հիման վրա կառուցում իր բանաստեղծական շարքերը, ինչպես՝

Երեք ճաճանչ, երեք երանգ, երեք գույն,

Որ անցան –

Քու՛յր, կապել են քո աչքերում, իմ հոգում –

Ծիածան (Չարենց 1962, 72: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերում- ների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ՝ Չ նշումով):

«Բանաստեղծն ամբողջ էությամբ մղվում է դեպի երեք գույնի ոլորտը՝ այն- տեղ ստեղծելու հոգեկան բերկրության տեսիլքը» (Աղաբաբյան 1973, 57):

Մեծարենցի ժողովածուում գույների նման խիստ շեշտադրում չկա, թեև վեր- ջինները պակաս խոսուն չեն: Այստեղ խոսքն ավելի շատ խոհերի ու հույզերի մասին է: Ինքը՝ Մեծարենցը, «Ինքնադատության փորձ մը» «Ծիածանին առի- թով» հոդվածում գրում է. «Տեսնենք հիմակ, թե բանաստեղծին մտքին մեջեն ինչպե՛ս ծիածանվեր են հավիտենական զգացումներն ու մտածումները» (Մե- ծարենց 1981, 238: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ՝ Մ նշումով): Փորձենք ներթա- փանցել մեծ բանաստեղծների գունային աշխարհները և տեսնել, թե դրանք ինչպես են նպաստել «ծիածանումն» արտահայտելուն:

Կապույտը

Մեծարենցի քնարերգության մեջ ամենից հաճախ կիրառվող գունանունը կապույտն է, ընդհանուր առմամբ՝ 28 գործածություն (որոնցից 7-ը՝ «Ծիածան» ժողովածուում): Սա պատահական չէ, քանի որ կապույտն իր տարբեր երանգ- ներով (ինչպես նաև սպիտակը) հաճախ է խորհրդանշել մաքրություն, քնքշու- թյուն, նրբություն: Խոսելով Եղիշե Թադևոսյանի «Աստվածածին» կտավի մա- սին՝ կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը գրում էր. «Աստվածածինը յուր կա-

պույտ և մեղմ աչքերի արտահայտությամբ, մայրական գորով է, սեր, անձնավիրություն՝ առանց նկարչի կողմից արտաքին միջոցներով մարմնավորած լինելու այդ, իսկ Որդին յուր մանկական թաթիկների մեջ բռնած սպիտակ և մաքուր աղավնու նման անմեղություն» (Հովսեփյան 1983, 196):

Հետևենք մի քանի բնագրային նմուշների՝ «Կապույտ ծուպեր, ծիածան, ծրփուն ձայներ, միստիք վարդ, Լույսե արցունք մոմերու՝ որոնք հանդարտ կը մաշին» (Մ 48), «Ուր երկինքն ալ կը քնանա, Կապույտներու խորհուրդին մեջ երազելով Վաղորդայններն երջանիկ» (Մ 69), «Թռիչներ հոգվույս մեջ լուսաբաղձ՝ կը թևեն Խոլ անուրջով կապույտներու հեռավոր» (Մ 74), «Հըմայքներով փողփողուն, Հեշտություն մը կապույտի, Հանդարտորեն կը ժպտի Հոգվույս մըռայլ տենչերուն» (Մ 33) և այլն:

Ակնհայտ է կապույտի դերը խոսքի արտահայտչականացման, «գունավորման» գործում՝ անկախ այն հանգամանքից, թե բառը գործածվել է իր սովորական ածականական իմաստով, կամ ստացել է գոյականական կիրառություն:

Չարենցը բանաստեղծություններից մեկը պարզապես վերնագրում է «Կապույտը», որտեղ, կարելի է ասել, տալիս է կապույտի իր ընկալման բավական բազմաշերտ բնութագիրը, ընդ որում, դա անում է նաև կրկնության միջոցով: Նշվել է, որ «կրկնության կարող են ենթարկվել նախադասության ամենատարբեր միավորներ, նույնիսկ ինքնուրույն բաղադրիչ չհանդիսացող բառեր ու բառմասնիկներ, ըստ որում, նախադասության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր միավորի կրկնություն ունենում է իրեն հատուկ ոճական լիցքավորում» (Պողոսյան 1991, 103): Կրկնությունների արմատները գալիս են դարերի խորքից, և դրանք իրավամբ կապվում են ժողովրդական բանահյուսության հետ:

Հինգ քառատողից բաղկացած բանաստեղծության մեջ կապույտն օգտագործված է տասնմեկ անգամ, ինչպես՝

Կապույտը հոգու աղոթանքն է, քույր,

Կապույտը-թախիճ.

Կապույտը-կարոտ թափանցիկ, մաքուր,

Ու հստակ, ու ջինջ (Չ 73):

Կապույտը նաև ծեփն աղոթքի կանչող զանգի դողանջն է, արցունք է, ցող է և այլն: Մի քանի այլ օրինակներ, որտեղ կապույտն օգտագործված իբրև նկարագրական կամ փոխաբերական մակդիր. «Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով, Լուսամփոփի՛ պես աղջիկ...» (Չ 69), «Դու տրտում ես, բայց արևի բռնկված ոսկին Ոսկեզօծել է քո կապույտ, աստղային հոգին» (Չ 81), կապույտի փոխանվանական՝ գոյականական գործածություն. «Այն, որ չի եղել, որ պետք է լինի Մանկական սրտում-Հոսում է որպես լուսավոր գինի-Հոգու կապույտում» (Չ 73), «Արևից առաջ, երբ կապույտը՝ հեզ, Սփրթնած, գունա՛տ Հիվանդ աղջկա երազ է կարծես՝ Հոգու մեջ հանգած» (Չ 74) և այլն:

Չարենցի «Ծիածանում» առկա է նաև հոմանշային կրկնությունը: «Հոմանիշները միշտ ունենում են չհամընկնող տարրեր՝ կամ առարկայական – տրամաբանական իմաստի մեջ, կամ կոննոտացիայում: Այդ իսկ պատճառով հոմանշային կրկնությունը հնարավորություն է ընձեռում առավել ամբողջական և բազմակողմանիորեն բացահայտելու և նկարագրելու առարկան» (Арнольд 1973, 130), ինչպես. «Չգում է հոգիս շրթերի վրա՝ Անմարմին, դողդոջ-Կապույտ, երկնագույն համբույրը նրա-Լուսավոր ջրոջ» (Չ 75):

Կապույտի հոմանիշներից Չարենցն օգտագործել է նաև *բիւր*. «Պատուհանից դղյակի ես տեսնում էի երկինքները *բիւր*» (Չ 77):

Մեծարենցը կապույտի հոմանիշներից կիրառել է հետևյալ բառերը. *բիւ, բիւ բիւ, լազվարթ, լազվարթե, լուրթ, լուրջ, խաժ, խաժագույն, խաժուկ, ծավի, օրինակ*. «Ու սիկառին ծուխն՝ որ *բիւ բիւ* կ'ամպանա՝ Ու *լազվարթե* գիծը ճամբուն հեռացող» (Մ 39), «Ջըրաշոգին գետին վրայեն ամպանըման կը բարձրանա, Կը փողփողին *լազվարթե* գույներ ճամբան ի վեր Կապույտ-Դարին» (Մ 50) և այլն:

Բանաստեղծությունները «գունավորելու», «երանգավորելու» համար Մեծարենցը կապույտի և նրա հոմանիշների կողքին գործածել է *կապույտ* արմատով կազմված բառեր, ինչպես՝ *կապուրակ, կապորակ, կապուրակ, կապուրաչվի, լսնակապույտ*. «Ու մարմանդները ճանճկեն, Ու սարերը *կապորակ* Եղկ հծծյունով մը կ'երգեն Լույսին ոսկի պատարագ» (Մ 83):

Չարենցը «Ծիածանում» կիրառել է կապույտով կազմված *կապուրաչյա* ածականը, որն արդեն իսկ նրա չափածոյում թողել էր իր մնայուն հետքը կապուրաչյա հայրենիք – սիրուհու կերպարով:

Հետաքրքրական է, որ Մեծարենցի «Ծիածան» ժողովածուն ավարտվում է «Կապույտ հաճումներ» բանաստեղծությամբ: Այն ամբողջությամբ երազային դեգերումների ու պրպտումների մի չքնաղ պատկեր է: Ուտանավորը, դեռ նոր տպագրված, բազում թեժ վեճերի աղիթ տվեց: Մասնավորապես «Մասիս» հանդեսի խմբագիր Ենովք Արմենը 1907 թ. 28–29 համարում Տիգրան Չյուկյուրյանի հրապարակած «Ծիածան. – Միսաք Մեծարենցի» գրախոսությանը կցել էր այսպիսի բովանդակությամբ մի դիտողություն. «Եւ մանաւանդ «Կապույտ յաճումներ». ինչ տեսակ բան է արդեօք այդ կապույտ յաճումը. կրնա՞ն նկարագրել: Կրնա՞յ նոյն ինքն նկարագրել անոր հեղինակը: Անիմաստ սէնայօլիսմի մը նմանողական գայթումներեն են մէկ քանի բանաստեղծներու փորձած այս մոլար կապկոթիւնները, որոնցմէ աղէկ կ'ընեն զգուշանալով նորահասները» (Արմեն 1907, 582):

Մեծարենցն այս դիտողությանն անդրադառնում է «Քննադատությունը» հոդվածում՝ գրելով. «Ենովք Արմեն սապես տրամաբանեց անշուշտ (կ'ենթադրեմ, քանի որ ինք հայտնապես տրամաբանելու քաջությունը չունեցավ). հաճում ≈ պտույտ, դեգերում, աննյութական, անտեսանելի բան մըն է՝ հետևաբար կապույտ չի կրնար ըլլալ... Ենովք Արմեն թող ուզե կարդալ ու հասկնալ պզտիկ արտագրումներ գոր պիտի ընեն «Կապույտ հաճումներ» խորագրով ոտանավորես, նախ ըսեմ, թե կապույտ հաճում ըսելով կը հասկնամ կապույտներու մեջ

հաճում, ու հետո պետք է գիտնա, թե այս պարագային հաճումը կապույտ տարբեր չի կրնա ըլլալ, քանի որ օդը ինքնին կապույտ է...» (Մ 257–258):

Հեղինակը բացատրում է «Կապույտ հաճումի» էությունը, որն իր նուրբ քնարականությամբ և մտային թռիչքով դարձել էր անհասկանալի «ավանդապաշտ» ընթերցողի համար:

Ոսկին

Իր ծիածանի երկրորդ գույնը, ճաճանչը, երանգը, վերջապես շարքը Չարենցն անվանել է Ոսկին: Ոսկին ինքնին գունանուն չէ, թեև խոսքային համապատասխան միջավայրում կարող է նշանակել ոսկեգույն: Ոսկին կապույտի բանաստեղծական շարունակությունն է, որ կարելի է մեկնաբանել իբրև անցում պատանությունից հասունություն, երազից իրականություն, նինջից արթնություն, թեպետ գուցե և ոչ լիարժեք:

Երբ բաց ենք անում աչքերս՝ կապույտ,
Աստղային նիրհից, –
Որ տեսնենք *ոսկու* ծիծաղը՝ անփույթ
Հղացած հրից (Չ 80):

Կապույտն ու ոսկին միահյուսված են, դրանք տարանջատելը շատ դժվար է, գուցե անհնարին: Մի դեպքում ոսկին կապույտի ծնունդն է. «Կապույտի՛ մեջ, կապույտի՛ մեջ – արևի *ոսկին*: – Քնի՛ր, քնի՛ր, կապույտ աղջիկ, չգարթնես ծեգին» (Չ 78), մյուս դեպքում ոսկին ամբողջացնում է կապույտը. «Դու տրտում ես, բայց արևի բռնկված *ոսկին* Ոսկեզօծել է քո կապույտ, աստղային՝ հոգին» (Չ 81): Այստեղ միջանկյալ ուզում ենք հիշել մի օրինակ Մեծարենցի «Ծիածանից»՝ մասնավորապես «Այգերգ» բանաստեղծությունից. «Երկու բոցե թևերու մեջ ծովանը կարն է սիրալի՛. – Կապույտի՛ փառքն ամրափակված շրջագիծով ոսկեդրվագ» (Մ 60): Նմանությունը, կարծում ենք, ակնհայտ է:

Կան ոսկու և կապույտի տակավին բազմաթիվ այլ նրբերանգներ: Ի վերջո, այս երկուսը երբեք չեն բաժանվում ու միասին էլ հեռանում են՝ հերոսներին թողնելով վերհուշը, հրաժեշտը, անդառնալիության ցավն ու կսկիծը. «Կապույտը վառվեց, խանձվեց *ոսկում*, Արևը – անցավ. Արևը – անհուն ու որբ կապույտում՝ Բռնկված մի ցավ» (Չ 88):

Մեծարենցի քնարերգության մեջ ոսկին հաճախակի կիրառված բառերից է՝ ընդհանուր քսանչորս կիրառություն, որից յոթը՝ «Ծիածան» ժողովածուում: Մեծարենցը ոսկին շատ է օգտագործել որպես մակդիր: «Մեղուները» ոտանավորում, օրինակ, այն կիրառվել է ծավալուն փոխաբերության մեջ՝ օգնելով գեղագիտորեն և բազմակողմանիորեն բնութագրելու մակադրյալը՝ հույսը.

Պիտի անցնի՛մ ես այս գիշեր՝
Երկյուղիս սեպ ճամբաներեն,

Իմ գանկիս տակ

Հույսի *նսկի* բոցին անուրջն առկայծելեն (Մ 64):

Այստեղ նկատի ունենանք մի հանգամանք. «Գոյական անվան համար որոշչային կիրառությունը ածանցիկ նշանակություն ունի: Իր ու իրողություն անվանող բոլոր խմբերի բառերը չէ, որ կարող են մատնանշել հատկանիշ ու դառնալ որոշիչ, այլ միայն նրանք, որոնք ինչ-ինչ կապակցություններում կորցնում են գոյականական բովանդակությունը և ստանում իրենց էությանը բնորոշ հատկանիշի այլևայլ գաղափարներ» (Պապոյան 1970, 277–278):

Հիշենք մի քանի օրինակ Մեծարենցի «Ծիածանից»․ «Հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լույսն է զըվարթ... *Ոսկի* թելեր՝ պլլըված խունկի թավիշ մըշուշին» (Մ 48), «Իր չըփույթին մեջ կը շիկնի *նսկի* աղջիկն արշալույսի, Այգն է ծաղիկ երագով լի ու բալաձիգ՝ թեթևորեն» (Մ 60), «Սեր-արևիդ բոցն երկարե խորերն հոգվույս իմ պատանի, Ջերթ արևին լեզվակն *նսկի՛* որ կը ծըծե մըշուշն այգուն» (Մ 60) և այլն:

Մեծարենցի չափածոյում առկա է *նսկի* արմատով 23 կազմություն՝ *նսկեբաշ, նսկեգես, նսկեդրվագ, նսկեգոծ, նսկեգոծել, նսկելար, նսկելույս, նսկեծաղիկ, նսկեծայր, նսկեծիծաղ, նսկեծին, նսկեկրակ, նսկեհյուս, նսկեղեն, նսկեման, նսկեմրափ, նսկենիշ, նսկեպաղպաջ, նսկեսայր, նսկեվարս, նսկեցուլ, նսկեփոշի, նսկինարգես*: Սրանց ճնշող մեծամասնությունը չափածոյում կիրառվել է միայն մեկ անգամ, ինչը ևս մի վկայություն է հեղինակի հարուստ բառապաշարի մասին: Այս բառերը, կարելի է ասել, գերազանցապես բանաստեղծություններում կիրառվող, «բանաստեղծական» բառեր են: Այսպես. «Եվ հածելեն մեջն արևին *նսկեծաղիկ* մառախուղին» (Մ 63), «Իմ երկինքս ալ կը հրճվի *նսկեծիծաղ* լույսիդ տակ» (Մ 65), «Պիտի հյուսեն նոր նարոտներ *նսկելար* Անոր հուշքին տեղ բոսոր, Իմ համբույրիս բոց ու բուրյան վարդերով» (Մ 66), «Շողա՛, ո՛վ արև, շառափներովդ *նսկեծայր*» (Մ 70) և այլն:

Չարենցը նույնպես ունի *նսկի* արմատով կազմություններ, դարձյալ բանաստեղծական բառեր, որոնք խոսքը ոճավորում ու հարստացնում են տարբեր նրբերանգներով, ինչպես. «Ահա ճերմակ առագաստները՝ *նսկի* Արևի դեմ հարսների պես շիկացած՝ օրորվելով, նագանքներով, կողք-կողքի – Ճամփա ընկան դեպի հեռուն *նսկեբաց...*» (Չ 83), «Փարվել է վանքի *նսկեթև* խաչին՝ ժպտավառ՝ որպես համբույր առաջին» (Չ 84), «Աչքերիդ մեջ, հոգուս մեջ, քու՛յր իմ, կա՛ր, քու՛յր իմ, կար՝ Ոսկու շշուկ, ոսկու փայլ, ոսկու ճաճանչ *նսկեվառ*: Եվ հոսում էր *նսկեծուփ* կապույտից դեպի վար՝ Արտերի գիրկը բերրի՛ մի հեշտություն հրավառ» (Չ 85):

Մանուշակագույնը

Չարենցի ծիածանային երրորդ գույնը մանուշակագույնն է: Այս երանգը հեղինակի համար խամրած է ու մշուշոտ, այն անխուսափելի ավարտն է, մայրամուտը՝ թախծալի ու հուսաբեկ: Մանուշակագույնի շարքին դեռևս չհասած՝ բանաստեղծն զգում է դրա մոտիկությունն ու անխուսափելիությունը և ցավով

արձանագրում. «Իջնում է ահա մի տրտում մշուշ *Մանուշակագույն*. – Կապույտի՛, ոսկու՛ տրտմունակ վերհուշ՝ խանձված հոգում...» (Չ 88):

Մանուշակագույնը դառնում է տրտմության խորհրդանիշը, երազները խամրում են մանուշակագույն իրիկնաժամին, անգամ տառապող հոգին ստանում է մանուշակագույն երանգ. «Քու՛յր իմ, այն մեռնող արևն էր – ժպտաց, Մի վերջին անգամ բռնկվեց միգում, որ ծիածանե քո աչքերը թաց ու տրտում հոգիս *մանուշակագույն...*» (Չ 91):

Մեծարենցի քնարերգության ներկայանալու մանուշակագույնը հաճախակի հանդիպող երանգ է: Բառն ինքնին ողջ չափածոյում առհասարակ վկայված է, առկա է *մանիշակ* գոյականը՝ կիրառված հինգ անգամ, որոնցից միայն մեկը՝ «Ծիածանում», ինչպես նաև *մանիշակե* հարաբերական ածականը՝ կիրառված երկու անգամ, երկուսն էլ «Ծիածան» ժողովածուում: Դրանցից մեկը հանդիպում է «Ցայգանկար» բանաստեղծության մեջ, որտեղ հետաքրքիր կերպով մանուշակագույնն աղերսվում է շղարշի հետ՝ գուցե՛ մի քիչ խամրելով, գուցե ավելի խորհրդավոր դառնալով. «Կ՛ընդնշմարեմ արտևանները ցրցուն *մանիշակե* լեռներուն Մարմաշի մեջ պլլրված» (Մ 69):

Փշրված երազների և մանուշակագույն իրականության առջև կանգնած չարենցյան հերոսին օգնության է հասնում ամոքիչ ծիածանը, և այստեղ էլ հեղինակը վերջակետ է դնում մանուշակագույնի, նրա հետ նաև երեք ճաճանչի ու երանգի խորհրդաբանությանը՝ հետագայում այն ամբողջացնելու համար «Հրաժեշտի երեկո»-ով ու սիրելի կնոջը ձոնված զազելներով.

Իսկ երազներն այրվեցին ու անցան:

Բայց ջինջ մնաց քո աչքերում, իմ հոգում –

Մի սրբացած, անրջացած *ծիածան՛*

Վերջի՛ն սիրո մի լուսավոր ամոքում... (Չ 94):

Իր ստեղծման պահից սկսյալ՝ ծիածանն ունեցել է փրկարար առաքելություն. այն մարդուն իր Արարչի հետ հաշտեցնող ուխտի նշանն է: Ջրհեղեղից հետո Աստված դիմելով Նոյին՝ ասում է. «Երբ երկրի վրայ ամպեր կուտակեն, իմ ծիածանը թող երեւայ ամպերի մէջ: Այնժամ ես կը յիշեմ իմ ուխտը, որ հաստատել եմ իմ ու ձեր միջեւ եւ շնչաւոր բոլոր էակների միջեւ: Այլեւս ջրհեղեղ չի լինի, որպէսզի բոլոր էակները չոչնչանան» (Աստուածաշունչ 1994, 12):

Մեծարենցն ի սրտե կապված էր Աստվածաշնչին: Այդ են վկայում ժամանակակիցները, մասնավորապես Գեղամ Բարսեղյանը՝ գրելով. «Մեծ նախասիրություն մը ուներ գրաբարին համար, զայն դավանելով լեզվի գեղեցկագիտության անսպառ աղբյուր մը և Նարեկին հետ կկարդար գրաբար Աստվածաշունչը, որոնք թերևս իր կրոնական զգացումներուն ալ կը խոսեին» (Միաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում 1986, 113): Ամոքիչ, հուսաբեր, լուսատու ծիածանը առկա է նաև Մեծարենցի ժողովածուում.

Ըզգացում մը բյուրեղե,

Ծիածանի երանգով,
Ցավոտ հոգվույս մուգին քով
Լույս ակուններ կը պեղե (Մ. 33):

Այս համատեքստում Մեծարենցի ու Չարենցի համանուն ժողովածուները, լինելով խիստ բազմաշերտ ու ինքնատիպ, ունեն զարմանալի հարազատություն, որը չի վրիպել գիտնականների աչքից: Հրանտ Թամրազյանը նշում է, որ «Չարենցը ոչ միայն զգում է, այլև ժառանգում Մեծարենցի ցավը, երազը, սերը, որոնք ինչ-որ կողմերով հարազատ էին նաև իր սերնդին: Մեծարենցը օգնում է նրան ավելի դյուրին մտնել նորագույն սերնդի ցավի ու երազի մթնոլորտը. ծնվում է նոր բանաստեղծությունը, որը և՛ ինքնուրույն, և՛ զարմանալի հարազատ է նախորդին» (Թամրազյան 1974, 92):

Որ Մեծարենցի ազդեցությունը մեծ է եղել Չարենցի վրա, որ Մեծարենցի քնարերգությունը եղել է Չարենցի հիացմունքի առարկան, ապացուցվում է նաև նրանով, որ տարիներ անց՝ 1929-ին, արդեն կայացած և անվանի բանաստեղծ Եղիշե Չարենցը դարձյալ անդրադառնում է Մեծարենցին՝ նորից ու նորից հիանալով հանճարեղ պատանիով և գրելով հայտնի սրտառուչ տողերը.

Արյուն է եղել աշխարհում: – Եղել է եղեռն ու կռիվ:
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև՛ է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին (Չարենց 1984, 587):

Եզրակացություններ

Ամփոփելով այս համառոտ քննությունը՝ փաստենք, որ գունանիշ բառերը թե՛ Մեծարենցի, թե՛ Չարենցի չափածոյում՝ մասնավորապես «Ծիածան» ժողովածուներում, ունեն մեծ դեր ու կշիռ: Թեև գույն արտահայտող բառերը զգացումների անվանումներ չեն, սակայն հաճախ զգացմունքների կամ տրամադրության արտահայտիչ են: Շատ դեպքերում այս միավորները ոչ միայն «գունավորում» ու «երանգավորում» են խոսքը, այլև մեծ չափով բանաստեղծականացնում, իսկ գունային հոմանիշները, գունանիշ արմատներով կազմված բառերը զարդարում ու հարստացնում են լեզուն: Գույները նաև խորհրդանիշ են, որոնց միջոցով հեղինակները հաճախ հասնում են փիլիսոփայական խոր ընդհանրացումների, ամբողջացնում գեղագիտական ընկալումները՝ խոսքին հաղորդելով նոր որակներ:

Շնորհակալական

Օգտակար տեղեկությունների և խորհուրդների համար խորին շնորհակալություն ենք հայտնում ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմին: Բարեխիղճ և արհեստավարժ աշխատանքի համար երախտագիտություն ենք

հայտնում «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական խորհրդին և աշխատակազմին:

Գրականություն/References/Литература

1. Աղաբաբյան Ս. 1973, Եղիշե Չարենց, գիրք առաջին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Aghababyan S. 1973, Yeghishe Charents, 1, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
2. Աղաբաբյան Ս. 1986, Հայ սովետական գրականության պատմություն, հ. առաջին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Aghababyan S. 1986, History of Soviet Armenian Literature, vol. 1, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
3. Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր կտակարանների 1994, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի Աստուածաշնչային ընկերության հրատ.:
Holy Bible 1994, Holy Etcmiadzin and the Armenian Bible Society, Published by the Holy See (in Armenian).
4. Ենովք Արմեն 1907, Դիտողություն կցված Տիգրան Չյոկյուրյանի «Ծիածան – Միսաք Մեծարենցի» գրախոսությանը, Մասիս շաբաթական հանդես, N 28–29:
Enovq Armen 1907, Comment Attached to Review of Tigran Chyokuryan's "Rainbow – Missak Metsarents", Masis Weekly Magazine, N 28–28 (in Armenian).
5. Թամրազյան Հ. 1974, Երիտասարդ Չարենցը, Երևան, «Հայաստան»:
Tamrazyan H. 1974, Young Charents, Yerevan, Hayastan (in Armenian).
6. Իշխանյան Ռ. 1972, Չարենցի լեզվական ուղին, Բանբեր Երևանի համալսարանի, N 3, 52–66:
Ishxanyan R. 1972, Charents' Language Path, Review of Yerevan University, N 3, 52–66 (in Armenian).
7. Հովսեփյան Գ. 1983, Նկարիչ Եղիշե Թադևոսյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության գրքում, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Hovsepyan G. 1983, Artist Yeghishe Tadevosian, Materials and Studies of Armenian Art History, vol. 1, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
8. Մեծարենց Մ. 1981, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Metsarents M. 1981, Complete Collection of Works, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
9. Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում 1986, Երևան, «Սովետական գրող»:
Missak Metsarents and Daniel Varuzhan in the Memories of Contemporaries 1986, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).
10. Շարուրյան Ա. 1983, Միսաք Մեծարենց, Երևան, «Սովետական գրող»:
Sharuryan A. 1983, Missak Metsarents, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).
11. Չարենց Ե. 1932, Երկեր, Երևան, «Պետհրատ»:
Charents E. 1932, Works, Yerevan, State Publishing House (in Armenian).

12. Չարենց Ե. 1962, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Charents E. 1962, Collection of Works, vol. 1, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
13. Չարենց Ե. 1984, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, ԵՊՀ հրատ.:
Charents E. 1984, Verses, Poems, Yerevan, Yerevan University Press (in Armenian).
14. Պապոյան Ա. 1970, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Երևան, «Լույս»:
Papoyan A 1970, The Linguistic Art of Paruyr Sevak's Verse, Yerevan, Luys (in Armenian).
15. Պողոսյան Պ. 1991, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, ԵՊՀ հրատ.:
Poghosyan P. 1991, Fundamentals of Speech Culture and Stylistics, 1, Yerevan, Yerevan University Press (in Armenian).
16. Арнольд И. 1973, Стилистика современного английского языка, Ленинград, «Просвещение».
Arnold I. 1973, Modern English Stylistics, Leningrad, Prosveshchenie (in Russian).